

Թատրոնը ծայրէփծայր լինէն էր, շատերը այդ երեկոյ Զուրաբովեան Տնից առանց տոժօակի վերադարձան: Լաւ կը լինէր, եթէ այդ պիէսը ճորից կրկնէին և այս անգամ Սառայի դերը փորձէին տալ տիկին Յասմիկին:

Աւելորդ չենք համարում աւելացնել, որ Հայկական Իրամատիկ Խմբակցութիւնը այս տարի որոշել է հնար եղածի չափ տեղ տալ հայկական պիէսներին. դա է հայ գեղարուեստի զարգացման, թատրոնական հասարակութիւն ստեղծելու միակ ուղին: Յաջողութիւն ենք ցանկանում Հայկական Իրամատիկ եռանդով զործող խմբակցութեան իր ծրագրածն առաջ տանելու:

N. N.

ԽՈՐՀՐԳԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԵՐ ՈՒՂՂԱԳՐՈՒԹԵԱՆ ՇՈՒՐՋԸ *)
(Ա. ն կ է տ ա)

Յօրելեանական Յանձնաժողովը կարեօր համարեց Մեծ Յօրելեանի փակման տօնին խորհրդակցութիւն ունենալ մեր ուղղագրութեան խնդրի մասին, որ տարիներէ ի վեր արժարժուում է մեր մամուլի մէջ. նկատի ունենալով անհրաժեշտութիւնը մեր ուղղագրութեան միակերպութեան, որ հետզհետէ դժբախտաբար աւելի ու աւելի խանգարուում է, կը խնդրէինք, Մեծ. Պարոն, որ հաճէիք ներկայ լինել այդ խորհրդակցութեանը, իսկ եթէ չէք կարող հօկտ. 12-ին էջմիածնում լինել, խնդրում ենք Ձեր կարծիքն ուղարկել, թէ արդեօք պէտք է և կարելի է մեր ուղղագրութեան մէջ փոփոխութիւններ մտցնել: Հաճեցէք նաև ի նկատի ունենալ, որ կարելի է առաջարկուած բոլոր հարցերին չպատասխանել, ինչպէս նաև այլ նոր հարցեր արժարժել և պատասխանել: Շատ կը պարտաւորեցնէիք մեզ, եթէ պատասխանէիք ներքեւում դրած հարցերին նոյնիսկ այդ դէպքում, երբ հնարաւոր չի լինի հասցնել պատասխանները մինչև յորելեանական հանդէսները. որովհետև Յօրելեանական Յանձնաժողովը մտադիր է իր ժողոված բոլոր նիւթերը յանձնել ս. էջմիածնի ուսումնարանական Յանձնաժողովին՝ կարծիքները ամփոփելու և եզրակացութիւնը զործնական նպատակների ծառայեցնելու համար:

I եթէ Ձեր կարծիքով պէտք չէ և կարելի չէ փոխութիւն մտցնել մեր ուղղագրութեան մէջ, կը խնդրէինք պատասխանել հետևեալ հարցերին.

1. Ինչ՞ո՞ պէտք չէ և կարելի չէ այդ անել:
2. Ի՞նչ կարծիք ունիք ուղղագրութեան միութեան մասին:
4. Ի՞նչից է առաջանում մեր ուղղագրութեան մէջ

*) Այս հարցուցակը կազմել է Յօրելեանական Յանձնաժողովի անգամ պ. Մ. Արեղեանը Յանձնաժողովի յանձնարարութեամբ:

փոփոխութիւններ մտցնելու ձգտումը, որով ուղղագրութեան խնդիրը շարունակ արժարժուում է և հետզհետէ նորանոր փոփոխութիւնների ենթարկուում:

5. Ի՞նչպէս պիտի վերաբերուի մեր ուղղագրութեան մէջ հետզհետէ մտնող նորանոր փոփոխութիւններին. արդեօք պիտի թողնել ազատ, թէ պէտք է և կարելի է որևէ ձևով որոշ ուղղութիւն տալ այդ ձգտումներին, կամ դրանց առաջն տանել յանուն ուղղագրութեան միակերպութեան: Եւ եթէ կարելի է և պէտք է այդ անել, ո՞վ և ի՞նչպէս պէտք է անի:

6. Եթէ անհրաժեշտ է միակերպ ուղղագրութիւն. հարկաւոր չէ արդեօք միակերպութեան վերածել տատանուող ուղղագրական ձևերը (թանկ-թանգ, գունտ-գունդ, վաղճան-վախճան, ծեօղ-ծնող և շատ նմանները), ինչպէս պէտք է ընտրութիւն անել այդպիսի բառերի գրութեան մէջ:

7. Ի՞նչպէս պիտի վերաբերուել առանձնապէս վ հնչիւնի վ, լ, ու նշանագրերով սչ միակերպ ուղղագրական ձևերին (ասուել, ասւել, ասվել): Արդեօք պիտի թողնել այդ տարբեր գրութիւնները, թէ պէտք է և կարելի է այժմ ուղղագրութիւնն այդ մասին միակերպութեան վերածել, և ինչպէս:

8. Ունի՞նք արդեօք մեր գրական լեզուի մէջ երկու տարբեր հնչիւն վ և ու նշանագրերի համար, ինչպէս կարծուում են, մէկը կոշտ վ (ծով) միւսը փափուկ լ (հաւ), թէ դա լոկ սխալ հասկացողութիւն է, և մենք միայն մի վ հնչիւն ունինք, և վազել, կով, աւաղ, հաւ բառերի մէջ նոյն վ հնչիւնն է, գրութեան ձևով միայն տարբեր: Արդեօք վ հնչիւնն ունեցող ուն՝ պատուէր, զուարթ և նման գրութիւնների մէջ կիսաձայն ու է (բաղաձայնական ու ձայնաւոր), թէ բաղաձայն՝ վ հնչիւնով:

II Եթէ Ձեր կարծիքով պէտք է և կարելի է փոփոխութիւններ մտցնել մեր ուղղագրութեան մէջ, կը խնդրէինք պատասխանել վերևում դրած հարցերի հետ (բացի առաջինից) նաև հետևեալներին.

1. Ինչ՞ո՞ պէտք է փոփոխութիւն մտցնել:
2. Արդեօք ճիշտ է այն կարծիքը, թէ ուրիշ ազգեր փոփոխութիւններ չեն մտցրել և չեն մտցնում իրենց դժուար ուղղագրութեան մէջ: Ո՞րչափ արժէք կարող են ունենալ մեզ համար այն հիմունքները, որոնցով առաջնորդուում են ուրիշ ազգերն իրենց լեզուի ուղղագրութեան մէջ փոփոխութիւն մտցնելու նկատմամբ:
3. Ի՞նչն է պատմականօրէն անփոփոջ մնացել մեր ուղղագրութեան մէջ, և ինչը փոփոխութեան ենթակայ է եղել և է:
4. Ո՞րչափ կարևոր և հնարաւոր է մեր ուղղագրութիւնը մօտեցնել արտասանութեանը:
5. Մինչև ո՞ր աստիճան՝ տեղական արտասանութիւններն արգելք կլինին ուղղագրութիւնն արտասանութեանը մօտեցնելուն: Կայ այդեօք ընդհանուր գրական արտասանութիւն որոշ տառերի համար, որոնց ուղղագրութիւնը դժուարութիւն է պատճառում:
6. Ո՞րչափ ճիշտ է այն կարծիքը, թէ որևէ փոփո-

խուժիւն մեր ուղղագրութեան մէջ՝ պատճառ կրինի ամբողջ ուղղագրութեան տակնուվրայ լինելուն: Չկայ արդեօք մի սահման, որ ամենքի համար ընդունելի պիտի լինի և որից այն կողմն անցնելն անհնարին է իսկապէս. սր տառերի ուղղագրութիւնն անձեռնմխելի պիտի մնայ:

7. Յատկապէս ինչպիսի և ինչ փոփոխութիւններ և ինչ միջոցներով հնարաւոր է անել, որ ուղղագրութեան միութիւնը չխանգարուի, և բառերի պատկերը մի անգամից մեծ փոփոխութեան չենթարկուի:

8. Կարելի է արդեօք օ տառը դուրս ձգել և օ ի տեղ միշտ ո գրել, Նթէ այդ կարելի չէ. կարելի է արդեօք այժմ՝ պահելով բառերի սկզբի օ տառը՝ բառերի մէջը և վերջը օ-ի տեղ ո գրել: Ինչն է արդելք լինում այդ փոփոխութեանը: Արդեօք արժէք ունի այստեղ օ-ով գրուող բառերի ստուգաբանութիւնը: Ո՞րքան դիւրութիւն առաջ կըզայ գրանով և սրբան բառերի պատկեր կը փոխուէր:

9. Ա) Կարելի է արդեօք է տառը դուրս ձգել և է-ի տեղ միշտ ն տառը գրել: Բ) Նթէ այդ կարելի չէ, կարելի է արդեօք՝ պահելով բառերի սկզբի է տառը՝ բառերի մէջը և վերջը է-ի տեղ ն գրել: Ո՞րքան արդելք կարող է լինել այս փոփոխութեանը է-ով գրուող բառերի ստուգաբանութիւնը: Գ) Նթէ այդ էլ կարելի չէ, կարելի է արդեօք է տառը պահել բառերի սկզբում և այն դէպքերի համար, որոնց մէջ է-ն բառակազմութեան ժամանակ փոխուում է ի հնչիւնի, իսկ մնացած դէպքերում գրել ն տառով: Դ) Նթէ այդ էլ կարելի չէ, կարելի է արդեօք է տառը պահել բառերի սկզբում, վերջում, մէջը ձայնաւորից առաջ, բայերի վերջաւորութիւնների մէջ (գրէք, գրեցէք, գրէր) և այն դէպքերում, երբ է-ն փոխուում է ի հնչիւնի, իսկ մնացած դէպքերում գրել ն տառով: Ե) Կարելի է արդեօք է տառը պահել միայն կիսաձայնի համար ա և ո ձայնաւորներից յետոյ, իսկ բառերի սկզբի յ-ի տեղ գրել հ տառը և բառերի վերջի անձայն յ տառը դուրս ձգել: Նթէ այդ կարելի չէ, կարելի է արդեօք պահելով բառասկզբի անձայն յ-երը, բառավերջի անձայն յ-երը դուրս ձգել: Ո՞րքան դիւրութիւն կը լինէր դրանով և սրբան կը փոխուէր բառերի պատկերը:

10. Կարելի է արդեօք յ տառը պահել միայն կիսաձայնի համար ա և ո ձայնաւորներից յետոյ, իսկ բառերի սկզբի յ-ի տեղ գրել հ տառը և բառերի վերջի անձայն յ տառը դուրս ձգել: Նթէ այդ կարելի չէ, կարելի է արդեօք պահելով բառասկզբի անձայն յ-երը, բառավերջի անձայն յ-երը դուրս ձգել: Ո՞րքան դիւրութիւն կը լինէր դրանով և սրբան կը փոխուէր բառերի պատկերը:

11. Կարելի է արդեօք այժմ նա, եօ, իւ, ոյ (յոյս) երկարբառների գրութեան մէջ փոփոխութիւն մտցնել:

Յոքելնական Յանձնաժողով

1913 թ. սեպտեմբեր
Ս. Էջմիածին:

ՀԱՅ ԳՐԵՐԻ ԳԻՒՏԻ ՀԱՆԴԵՍՆԵՐԸ

(Կ. Պոլսի պատրիարք. տեղապահի շրջաբերականը)

Ազգային կեդրոնական վարչութեան խառն ժողովոյ յանձնարարութեամբ և կեդր. ուսումնական խորհրդոյ կարգադրութեամբ որոշուած է տօնել առաջիկայ հոկտեմբերի 13-ին, կիրակի օր, մայրաքաղաքիս բոլոր թաղերուն մէջ հայ տառերու գիւտին 1500-ամեակը և հայ տպագրութեան չորեքդարեան յօրելեանը:

Կը յանձնարարենք ուրեմն պատ. խորհրդիդ, որ նկատի ունենալով մեր ազգային գոյութեան տեսակէտով այս գոյգ մը աւագ տօնին ամենամեծ նշանակութիւնը՝ բարեհաճի փոյթ և հոգածութիւն չլննայել կազմակերպելու նոյն օրուան համար եկեղեցական և ժողովրդական կրկնակ հանդէսներ, որոնք կարենան արժանապէս պանծացնել մեր մեծանուն նախնեաց՝ Սահակայ և Մեսրոպայ ինկիլի յիշատակը և ի վեր հանել անոնց կատարած դործին մեծութիւնը:

Եւ որպէսզի ամեն հայու սրտին խօսող այս տարի դարձի հանդէսները օգտակար աղիւնքով մը անմահանան ու կրեն յաւերժական կնիք մը, կը յանձնարարենք նաև, որ հանդէսի կազմակերպութեան առթիւ հոգ տանինք մասնաւոր հանգանակութեամբ և կամ ուրիշ յարմար ձևով մը ստանալ պատուական մերազնէից սիրայօժար և լիառատ նուէրները, որոնք միանալով ուրիշներու հետ՝ պիտի կազմեն կրթական այն ֆօնդը, որ պիտի յատկանայ գաւառի մէջ վարժապետանոցի մը հաստատման՝ իրր արժանի յուշարձան մեր կրթական սնմուաց ուսնիւրաններուն՝ Սահակայ և Մեսրոպայ:

Լի մտահուլովեամբ, թէ ամեն հայ պիտի վուլթայ կատարել իր այս նուիրական պարտականութիւնը և թէ պատ. խորհուրդդ ոչինչ պիտի չլննայէ հանդէսին կանոնաւորութեան և վայելչութեան մասին, կօրնենք ձեր բոլոր ջանքերը ու մաղթելով նախախանամութեան ս. աջը հովանի ու պահպան ողջոյն հայ ազգին վրայ՝

Մնամք ողջունիւ հայրական սիրոյ՝

Աղօթարար

Պատրիարքական տեղապահ՝

Դաբրիէլ եպ. Ծէվաճիրճեան

Տ. ԶԱԻԷՆ, ԵՊԻՍԿ. Տ. ԵՂՄԱՆԱՆ

(Կենսագրական նօթեր)

II

1896 նոյեմ. 6-ին Օրմանեան Ս. ընտրուելով Պատրիարք. աշխատեցաւ այս ցրուած ոյժերէն օգտուելու Դպրեվանքը վերակազմելէ զառ, աշխատեցաւ անոր անդրանիկ սերունդը պատրաստել վարչական պաշտօններու: Վարչութեան որոշմամբ կարգադրուեցաւ Արմաշի վարդապետները վաղեմի և փորձ առաջնորդներու օգնական կարգելու: